

# ՀՈՒՎԱԾՆԵՐ

## ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՕՊՏԻՄԱԼ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Է. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ակտիվ-ընտրողական գործունեության միջոցով ինքնակատարելագործումը ներհատուկ է սոցիալական համակարգին: Այդ տեսակետից գործունեությունը նպատակների իրականացման սոցիալական այնպիսի եղանակ է, որի միջոցով իրերի ու իրադարձությունների զարգացման բնական ընթացքը զարգացման սոցիալական ընթացքին համապատասխան արագացվում կամ, անհրաժեշտության դեպքում, կասեցվում է: Գործունեությունը, հետևաբար, կյանքի կողմից առաջադրված սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման եղանակ է:

Սոցիալ-տնտեսական խնդիրը հասարակական որոշակի նպատակների ու շահերի և նրանց պրակտիկ իրականացման անբավարար սոցիալական պայմանների միջև հակասությունների դրսևորման ձև է: Այդ տեսակետից խնդրի լուծումը կարելի է բնութագրել որպես սոցիալական համակարգի առկա վիճակի և նրանում ծավալված իրադարձությունների վրա այնպիսի սոցիալական միջամտություն, որի շնորհիվ համակարգը ձեռք է բերում զարգացման, փերարտադրության ու գործառնության համար օպտիմալ պայմաններ: Կյանքի կողմից առաջադրված խնդիրների լուծման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է լուծման ճիշտ եղանակի ընտրությունից:

Հայտնի է, որ վերջին տասնամյակում մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով սովետական հասարակությունը կանգնեց որոշ դժվարությունների և հասարակական նշանակություն ունեցող սոցիալ-տնտեսական խնդիրների առջև: Հարկ էր, որ վերլուծվեին այդ խնդիրների առաջացման ու գործառնության պատճառները և, որն ավելի կարևոր է, լուծման սոցիալիստական հասարակարգին բնորոշ և արդյունավետ եղանակները: Ըստ Լուբյան ՍՄԿԿ ԿԿ 1985 թվականի ապրիլյան պլենումից հետո կուսակցության սոցիալ-տնտեսական քաղաքականությունն ամբողջապես նվիրված է եղել հենց այդ հարցերին: Ծվ դա պատահական չէ: Ինքնակատարելագործվող համակարգը չի կարող օպտիմալ զարգանալ ու գործառնել առանց գործունեության գիտական ծրագրի: ՍՄԿԿ XXVII համագումարը նշեց, որ մեր երկրի «սոցիալ-տնտեսական զարգացման արագացումը մեր բոլոր՝ մոտակա և հեռանկարային, տնտեսական ու սոցիալական, քաղաքական ու զաղափարախոսական, ներքին ու արտաքին պրոբլեմների բանալին է: Միայն այդ ճանապարհով կարող է ձեռք բերվի սովետական հասարակության որակական նոր վիճակը»<sup>1</sup>: Այդ տեսակետից սոցիալ-տնտեսական զարգացման առաջա-

<sup>1</sup> «Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարի նյութեր», Եր., 1986, էջ 31:

ցումը հասարակական կյանքի սոցիալականացման ստրատեգիան է, սոցիալիստական համակարգի առջև ծառայած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման օպտիմալ եղանակը: Այդ եղանակը, իր հերթին, պայմանավորված է այլ գործոններով: Հարցն այն է, որ համակարգի զարգացման արագացումը պահանջում է կատարելագործել, իսկ հարկ եղած դեպքում նաև փոխել ներհամակարգային մեխանիզմներն ու հարաբերությունները, համակարգին օժտել գործառնական այնպիսի ճկունությամբ, որ համակարգը կարողանա դիմանալ զարգացման արագացման ռիթմին: Ոչ մի համակարգ չի կարող անցնել զարգացման արագացման կուրսին, եթե նախապես չեն իրականացվել միջոցառումներ, որոնք կմեծացնեն համակարգի գործունեության հուսալիությունը նոր ուժերի պայմաններում: Ահա թե ինչու արագացման կուրսի իրականացումը ենթադրում է հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի արմատական վերակառուցում:

Այսպիսով, եթե արագացումը սոցիալական համակարգի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ստրատեգիան է, ապա վերակառուցումը համակարգի օպտիմալ զարգացման ու գործառնության իրականացման տակտիկան է: Ի վերջո դժվար չէ նկատել, որ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման օպտիմալությունը ենթադրում է լուծման պայմանների վերարտադրություն՝ լուծման օպտիմալ պայմանների ձևով: «Արագացման ստրատեգիան,— նշվեց ՍՄԿԿ XXVII համագումարում,— ենթադրում է հասարակական հարաբերությունների կատարելագործում, քաղաքական ու գաղափարախոսական ինստիտուտների աշխատանքի ձևերի ու մեթոդների նորացում, սոցիալիստական դեմոկրատիայի խորացում, ինքնիշխան, լծացման ու պահպանողականության, այն ամենի վճռական հաղթահարում, ինչ կասեցնում է հասարակական առաջադիմությունը»<sup>2</sup>: Ասածից հետևում է, որ առկա խնդիրների լուծման համար ամենից առաջ անհրաժեշտ է փոխել խնդրի ծագման պայմանները և ստեղծել լուծման համար անհրաժեշտ պայմաններ: Խնդրի ծագման պայմանները էապես տարբերվում են լուծման պայմաններից<sup>3</sup>: Ինչ խոսք, ամեն մի սոցիալական պայման այս կամ այն չափով պարունակում է խնդրի լուծման որոշ հնարավորություններ: Սակայն, խնդրի լուծման օպտիմալ պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է արմատապես վերակառուցել հին պայմաններն ու հանգամանքները: Մասնագիտական գրականության մեջ խնդրի լուծման պայմանների հարցը քիչ թե շատ ուսումնասիրված է: Մեր կարծիքով առանձնահատուկ գիտական հետաքրքրություն է ներկայացնում խնդրի լուծման օպտիմալ պայմանների հարցը: Այդ տեսակետից հարցի պարզաբանումը կապված է «վերակառուցում» հասկացության բովանդակային վերլուծության հետ:

Համակարգի վերակառուցումն առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման օպտիմալ պայմանների ստեղծման ձև է: Վերակառուցել համակարգը նշանակում է բացասել գոյություն ունեցող խնդիրների վերարտադրության հնարավորությունները: Հին պայմանները թեև ունեն իրենց կողմից կյանքի կոշած խնդիրների լուծման որոշ հնարավորություններ, բայց ի վիճակի չեն կանգնեցնելու այդ խնդիրների վերարտադրության պրոցեսը: Ավելին, այդ խնդիրները հենց այդ պայմանների արդյունք են: Նկատի ունենալով այդ հանգամանքը, ՍՄԿԿ ԿԿ 1987 թվականի հունվարյան պլենումը նշեց, որ «վերակառուցում նշանակում է լծացման պրոցեսների վճռական հաղթահարում,

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>3</sup> Տե՛ս В. И. Куценко. Социальная задача как категория исторического материализма. Киев, 1972, էջ 56:

արգելակման մեխանիզմների փշրում, սովետական հասարակութայն սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու հուսալի և արդյունավետ մեխանիզմների ստեղծում»<sup>4</sup>: Այսպիսով, համակարգի զարգացման ստրատեգիական կուրսը՝ արագացումը կարելի է իրականացնել միայն վերակառուցման եղանակով: Նկատենք միայն, որ հարցն ավելի բարդ է, քան այն երևում է առաջին հայացքից: Բանն այն է, որ ամեն մի սոցիալական համակարգ մշակում է մի շարք հաստատուն նորմեր ու արժեքներ, որոնք, ելնելով որոշակի նկատառումներից, սահմանափակում են առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման միջոցների ու եղանակների ընտրության հնարավորությունները: Միաժամանակ, համակարգը չի կարող օպտիմալ ձևով լուծել իր առջև դրված խնդիրները, չփոխելով ու չկատարելագործելով հին պայմաններն ու նորմերը, որոնք նոր պայմաններում վերածվում են արգելակիչ մեխանիզմների: Մեր երկրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման գործում այդպիսի արգելակիչ մեխանիզմ էր դարձել հասարակութայն կառավարման կարգադրիչ-վարչական մեթոդը:

Հասարակությունն առաջ է ընթանում փոփոխությունների միջոցով և միայն այդպես: Բայց այդ փոփոխությունները չպետք է հասկանալ որպես քոսոս ու անորոշություն: Սոցիալական համակարգի ուժը ոչ միայն վերակառուցվելու ճկունության մեջ է, այլև կայունության: Ահա թե ինչու կարելի է ասել, որ սոցիալ-տնտեսական խնդիրների օպտիմալ լուծման անհրաժեշտ պայմաններից մեկը համակարգի վերակառուցումն է, մյուսը՝ կայունությունը: Ընդ որում, կայունությունն ու վերակառուցումը փոխլրացնող և ոչ իրարամերձ ուժեր են: Առանց համակարգի որակական որոշակիության պահպանման՝ ամեն մի վերակառուցում համակարգի կործանում է նշանակում: Վերակառուցել նշանակում է վերականգնել համակարգի որակական որոշակիությունը, այն որոշակիությունը, որով նա տարբերվում է այլ սոցիալական որոշակիությունից և որի շնորհիվ հնարավոր է դառնում համակարգի զարգացումն ու գործառնությունը:

Այսպիսով, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը, երբ այն քննարկում ենք հասարակական կյանքի օպտիմալ զարգացման ու գործառնության տեսանկյունից, համակարգի վերակառուցման այնպիսի պրոցես է, որի արդյունքը համակարգի որակական որոշակիության հաստատումն է: Համակարգի որակական որոշակիությունն էլ իր հերթին դառնում է համակարգի օպտիմալ վերակառուցման պայման: Դժվար չէ նկատել, որ մենք գործ ունենք որոշակի պարագոքսալ իրադրության հետ: Համակարգը չի կարող վերակառուցվել ու լուծել իր առջև ծառայած սոցիալ-տնտեսական խնդիրները, չփոխելով իր որակական որոշակիությունը: Միաժամանակ, վերակառուցումն ու առկա խնդիրների լուծումը համակարգի որակական որոշակիության հաստատման պրոցես են: Վերակառուցման հարցը դրվում է այն ժամանակ, երբ տվյալ որոշակիությունը սպառում է համակարգի հետագա օպտիմալ զարգացման ու գործառնության հնարավորությունները: Ստեղծելով զարգացման ու գործառնության նոր ու արդյունավետ հնարավորություններ, վերակառուցումը, դրանով իսկ, ստեղծում է համակարգի նոր որակական որոշակիություն: Ըստ էության մենք գործ ունենք հստակ արտահայտված դիալեկտիկական բացասման փաստի հետ: Վերակառուցումը համակարգի որակական որոշակիության բացասում է՝ նոր մակարդակի վրա այդ որոշակիությունը վերականգնելու համար: Վերակառուցումը որոշակիության բացասումն է հա-

<sup>4</sup> «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը (1987 թ., հունվարի 27—28-ին)», Եր., 1987, էջ 21:

մակարգի զարգացման ու գործառնության համար օպտիմալ որոշակիություն տեղծելու նկատառումներով: Այսպիսով, ամեն մի սոցիալ-տնտեսական խնդրի բովանդակության մեջ միաժամանակ առկա է հաստատման ու ժխտման միտումը: Այն մի կողմից ձևավորվում է որպես սոցիալական համակարգի որոշ կողմերի ու մեխանիզմների ժխտման. մյուս կողմից՝ նոր տարրերի ու մեխանիզմների հաստատման պահանջ: Իսկ դա նշանակում է, որ խնդրի լուծումը համակարգի որոշ մեխանիզմների գործողությունների սահմանափակման և որոշ մեխանիզմների գործողությունների ոլորտի ընդլայնման պրոցես է: Խնդիրը որոշակի կասկած է համակարգի տվյալ վիճակի նպատակահարմարության մասին: Բայց խնդրի բովանդակությունն արտահայտողը ոչ թե կասկածն է, այլ նորի հաստատումն ու վերակառուցումը:

Լուծել որոշակի սոցիալ-տնտեսական խնդիր, նշանակում է սոցիալական համակարգի համապատասխան ոլորտում վերականգնել զարգացման ու գործառնության սահմանային հնարավորությունները: Այդ տեսակետից խնդրի լուծումը համակարգի օպտիմալ զարգացման ու գործառնության եղանակ է: Ընդ որում, եթե բացահայտված ու ձևակերպված խնդիրը համակարգի հետագա զարգացման ու գործառնության ծրագրի բովանդակության բաղկացուցիչ մասն է, ապա խնդրի լուծումը հանդիսանում է այդ ծրագրի իրականացման պրոցես: Լուծման պրոցեսը համակարգի սոցիալ-տնտեսական վարքի հնարավոր այլ եղանակներից որոշակի եղանակի նկատմամբ հասարակության նախապատվության պրակտիկ հաստատման ձև է: Լուծման պրոցեսը նաև սոցիալական համակարգի կենսունակության արտահայտման ձև է: Սոցիալական համակարգը բնութագրելիս պետք է հաշվի առնել երկու կարևոր որակական ցուցանիշներ. առաջին՝ ինչպիսին են նրա զարգացման ու գործառնության սահմանային հնարավորությունները, երկրորդ՝ ինչպիսին է այդ հնարավորությունների օգտագործման ռեալ իրավիճակը: Կապիտալիզմի զարգացման սահմանային հնարավորությունների հարցը մարքսիզմ-լենինիզմի դասականների կողմից վաղուց է վերլուծվել: Նրա պատմական դատապարտվածությունն այլևս միայն տեսություն չէ: Բայց ահա իր սահմանային հնարավորությունների օգտագործման ռեալ իրավիճակով կապիտալիզմի զարգացման ներկա պատմությունն ուսուցողական է: Արևմտյան փոխսոփայական ու սոցիոլոգիական բազմաթիվ կոնցեպցիաներ, կատարելով իրենց գաղափարախոսական ծանրաբեռնվածությունը, միաժամանակ բացահայտում և կյանքի են կոչում այն մեխանիզմները, որոնք նպաստում են կապիտալիզմի սահմանային հնարավորությունների պրակտիկ իրացմանը: Ցավ ի սիրտ վերջին տասնամյակների մարքսիստական սոցիոլոգիան ինչ-ինչ պատճառներով օտարվել էր կյանքից: Եթե պատմական ժամանակի առումով կապիտալիզմը գտնվում է իր սահմանային հնարավորությունների օգտագործման ավարտական փուլում, ապա սոցիալիստական հասարակարգի ներքին շօտագործված պոտենցիալն անսպառ է:

Ներքին հնարավորությունների շօտագործումը ոչ միայն բացասաբար է անդրադառնում համակարգի զարգացման ու առաջընթացի վրա, այլև դառնում սոցիալ-տնտեսական լուրջ պրոբլեմների առաջացման պատճառ: Կարելի է տեսլ, որ պատմականորեն առավել հումանիստական ու առաջադեմ նպատակներ կյանքի կոչելու համար ստեղծված աֆիայական համակարգը, որը նաև արդյունավետ չի օգտագործում իր սոցիալ-տնտեսական մեխանիզմների հնարավորությունները, ուշ թե շուտ կարող է կոռուզիայի ենթարկվել: Բայց մեխանիզմներն ինքնին չեն գործում: Այն գործի են դնում մարդիկ, որոնք նաև ելնում են իրենց շահերից, փորձից ու հմտությունից: Բայց նրանք ելնում են նաև առկա հանգամանքների, «այս պահ» սթափ տրամա-

լանությունից: Իսկ պահի տրամաբանությունը միշտ չէ, որ կարող է լինել օրյեկտիվ: Հավանաբար հենց այդ հանգամանքներով պետք է բացատրել մեր երկրի զարգացման տարբեր փուլերում ծագած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման եղանակների բնույթն ու բովանդակությունը: Մեծ ի մասամբ դրանք եղել են կարգադրիչ-վարչական ու խանգավառության մեթոդներ: Չի կարելի ժխտել, որ այդ մեթոդները զարգացման այս կամ այն փուլում որոշակի արդյունք են տվել: Քաղաքացիական պատերազմի, սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, ֆաշիզմի շախշախման և հետպատերազմյան առաջին տարիներին մեր երկրի առջև ծառայած սոցիալ-տնտեսական ու քաղաքական խնդիրների լուծումը դա է վկայում: Հարցն այն է, թե լուծման այդ եղանակները որքանով էին արդյունավետ:

Ոչ մի սոցիալ-տնտեսական խնդիր չի կարելի հետևողականորեն լուծել, եթե անտեսվում են մարդկանց շահերը: Երբեք մարդկային գործունը չի դառնա վճռական ուժ, եթե նա անձամբ շահագրգռված չէ: Բարեկեցության համար մարդու բնական պահանջումները հակաբարոյական չէ: Խնդիրը, որի լուծման համար մարդը ծավալում է ֆիզիկական ու հոգևոր էներգիա վատնող գործունեություն, պահանջում է փոխհատուցում: Փոխհատուցում՝ ըստ աշխատանքի և ըստ ընդունակությունների: Ոչ թե «հանուն խնդրի լուծման», այլ «խնդրի լուծումը հանուն մարդու» սկզբունքով կարելի է հաղթահարել հասարակական կյանքում տեղ գտած թերություններն ու դժվարությունները: Ամեն մի լուծման պրոցես գործունեություն է, որի միջոցով մարդը վերափոխում է սոցիալական կյանքը՝ իր իսկ վերափոխման համար ստեղծելով օրյեկտիվ նախադրյալներ: Այդ տեսակետից խնդրի լուծումը ոչ թե պարզապես համակարգի պրոբլեմային իրադրությունների հաղթահարման պրոցես է, այլ իրականության այնպիսի վերարտադրություն, որի հետևանքով մարդկանց սոցիալ-տնտեսական շահերը դառնում են ակտիվ գործունեության շարժառիթներ: Անհատականի հասարակականացումն ընդհատվում է այնտեղ, որտեղ հասարակականը չի անհատականանում:

Մարդկանց կենսագործունեության բովանդակության հիմքում ընկած է սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման եղանակը: Եթե լուծման եղանակը չի համապատասխանում և չի բավարարում մարդկանց շահերը, նշանակում է՝ մարդկանց կենսագործունեությունն առարկայազրկված է: Մինչդեռ կենսագործունեությունը խնդրի լուծման այնպիսի եղանակ է, որի ընթացքում մարդիկ իրագործում են իրենց նպատակներն ու շահերը: Շարժառիթների առկայությունը հասարակական խնդիրներին տալիս է անհատական երանգ: Այդ կապակցությամբ կարելի է ասել, որ քիչ թե շատ տիպական սոցիալ-տնտեսական խնդրի լուծման եղանակը նաև տվյալ սոցիալական համակարգի, նրանում գործող բաշխման, սպառման ու փոխանակման հարաբերությունների վերարտադրության եղանակն է:

Խնդիրը համակարգի ֆունդամենտալ բնութագիրն է, քանի որ նրան բնորոշ վիճակը պրոբլեմային լինելն է: Խնդրի լուծումը նոր սոցիալ-տնտեսական դաշտ է ստեղծում այլ խնդիրների համար: Հետևաբար համակարգը վերարտադրվում է խնդիրներ լուծելու եղանակով: Համակարգը ձեռնամուխ է լինում այն խնդիրների լուծմանը, որոնք անմիջապես առնչվում են իր կենսագործունեության եղանակին: Իսկ դա նշանակում է, որ լուծումը կենսագործունեության տիպական պայմանների ու հանգամանքների վերարտադրության ու գործառնության եղանակ է: Ավելին, խնդրի լուծումը համակարգի կենսագործունեության այնպիսի եղանակ է, որի շնորհիվ առանձնացվում է համակարգի զարգացման ու գործառնության օպտիմալ եղանակը: Քանի որ սոցիալական կյանքում միշտ հնարավոր չէ գտնել զարգացման ու գործառ-

նության օպտիմալ եղանակը, այդ պատճառով էլ ամեն մի լուծում այս կամ այն չափով կապված է որոշակի ռիսկի հետ: Հարցն էլ ավելի է բարդանում հատկապես այն պատճառով, որ սոցիալ-տնտեսական խնդիրները, որպես կանոն, ունեն լուծման մի շարք մրցակից եղանակներ, որոնցից ամեն մեկն արտահայտում է մարդկանց որոշակի խմբերի կենսագործությունը:

Մասնագիտական գրականության մեջ խնդրի լուծման օպտիմալության չափանիշների հարցը հիմնականում քննարկվել ու քննարկվում է տնտեսագիտության, կիրառական տեխնոլոգիայի և ինժեներական հոգեբանության տեսանկյուններից: Սակայն, հաշվի առնելով ժամանակակից պայմաններում հասարակական կյանքի տարբեր ոլորտների փոխներգործության ինտենսիվացման միտումը, ինչպես նաև համակարգի հետագա զարգացման գործում սոցիալ-տնտեսական խնդիրների դերի աճը, կարելի է ասել, որ պրոբլեմի սոցիալ-փիլիսոփայական տեսանկյան մշակման հարցը դարձել է հրատապ: Նման մոտեցման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ ոչ մի մասնավոր գիտական մոտեցում չի կարող տալ համակարգի գլոբալ զարգացման բազմակողմանի վերլուծությունը: Տնտեսագիտական գրականության մեջ, օրինակ, որպես խնդրի լուծման օպտիմալության չափանիշ վերցնում են կապիտալ ներդրումների չափը, աշխատանքային ու արտադրական ռեսուրսները և այլն<sup>5</sup>: Հաճախ այդպիսի չափանիշներն ելակետ են դառնում նաև սոցիալ-փիլիսոփայական հետազոտությունների ժամանակ: Վ. Գ. Աֆանասևը, օրինակ, գտնում է, որ խնդրի լուծումն օպտիմալ է, եթե աշխատանքային, նյութական ու ֆինանսական ռեսուրսների նվազագույն ծախսումներով հասնում ենք առաջադրված նպատակին<sup>6</sup>: Անշուշտ նշված գործոններն ունեն մշտական նշանակություն: Բայց, դժվար չէ նկատել, որ այդ գործոններն ավելի շատ տեխնիկական միջոցների օգտագործման օպտիմալության չափանիշներ են:

Ինքնին պարզ է, որ ամեն մի խնդիր բազմասպեկտ է: Միևնույն խնդիրը կարող է ունենալ ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական, քաղաքական, էկոլոգիական և այլ կողմեր: Այլ հարց է, որ պատմական որոշ ժամանակաշրջանում առաջնային է դառնում այդ ասպեկտներից այս կամ այն կողմը: Այդպիսի դեպքերում հարցի միակողմանի լուծումը կարող է բացասաբար անդրադառնալ համակարգի այլ ոլորտների համամասնական զարգացման վրա: Ոչ կոմպլեքս լուծումը հղի է շնախատեսված պայթյուններով: Վկա՝ էկոլոգիական ճգնաժամը: Կամ, ինչպես դիպուկ նկատում է Ա. Ա. Հովսեփյանը, մեզանում շատ հաճախ տնտեսական առաջադրանքները լուծվել են և առաջադրանքները կատարելու համար որոշ ղեկավարներ «հերոսացել» սոցիալիստական հասարակական հարաբերությունների դեֆորմացման ու ոչ համարժեք վերարտադրության գնով<sup>7</sup>: Նման հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է մշակել սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման օպտիմալության համակարգային նշանակություն ունեցող չափանիշներ: Նման չափանիշներ մշակելու համար անհրաժեշտ է, որ ցանկացած սոցիալ-տնտեսական խնդրի լուծումը դիտարկել սոցիալական համակարգի բոլոր ոլորտների օպտիմալ զարգացման ու գործառնության տեսանկյունից: Վերջին հաշվով խնդրի լուծումը կարող է օպտիմալ լինել, եթե համակարգի բոլոր ո-

<sup>5</sup> Յե՛ս Լ. С. Беляев. Решение сложных оптимизационных задач в условиях неопределенности. Новосибирск, 1978, էջ 9:

<sup>6</sup> Տե՛ս В. Г. Афанасьев. Научное управление обществом. М., 1976, էջ 296:

<sup>7</sup> Հովսեփյան Ա. Ա., Հասարակական հարաբերությունների վերարտադրության սոցիալ-փիլիսոփայական պրոբլեմները, Եր., 1986, էջ 82:

լորտներն էլ մասնակցում են այդ պրոցեսին: Հետևությունը մեկն է. սոցիալ-տնտեսական խնդիրը համակարգի համար գերխնդիր է: Այն շունի և չպետք է ունենա մասնավոր բնույթ: Գերխնդրի լուծումը կրում է սկզբունքային բընույթ և ընդգրկում է ողջ հասարակական կյանքի վերարտադրության առանձնահատկությունները: Այն աչքի է ընկնում իր մասշտաբայնությամբ: Մեր օրերում այդպիսի գերխնդիր է սովետական հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման արագացումը: Ինչ խոսք, մեր երկիրն ունեցել և հաջողությամբ լուծել է մի շարք գերխնդիրներ: Օրինակ, սոցիալիզմի էությունատեսիկական բազայի ստեղծումը, ֆաշիզմի ջախջախումը, պատերազմից հետո տնտեսության վերականգնումը և այլն:

Ուժերի համախմբումը, ներքին հնարավորությունների օգտագործումը հասարակության կենսունակության ու զարգացման կարևոր պայմաններից են: Այդ գործոնները գործում ու գործառնում են այն ժամանակ, երբ հասարակության առջև դրվում են գերխնդիրներ: Խնդիրը տիրապետում է մասսաներին, եթե այն արտահայտում է նրանց արմատական շահերը: Այդ պատճառով էլ խնդրի լուծման օպտիմալության հարցը քննելիս պետք է հաշվի առնել նրա ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական տեսանկյունները: Ուստի դժվար է համաձայնել այն հեղինակների հետ, ովքեր օպտիմալությունը դիտարկում են որպես զուտ տնտեսագիտական կատեգորիա՝ կապելով այն արտադրողական ուժերի զարգացման հետ<sup>8</sup>: Չկա զուտ սոցիալական կամ տնտեսական խնդիր: Նրանցից ամեն մեկը այս կամ այն կերպ կապված է մյուսի հետ: Վ. Ն. Լեվչիցը իրավացիորեն նկատում է, որ լուրջ համակարգերի պլանավորման ժամանակ ևս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն անմիջապես նախատեսվող ծախսերն ու սպասվելիք հետևանքները՝ այլև սպասվելիք արդյունքն ու կորուստները, որոնք կառաջանան ժողովրդական տնտեսության այլ ոլորտներում<sup>9</sup>: Եվ դա հասկանալի է, քանի որ որքան մեծանում է համակարգի օրգանական ամբողջականությունը, այնքան ընդլայնվում է խնդրի լուծման հետևանքների ազդեցության ոլորտը<sup>10</sup>: Հետևաբար, գտնել լուծման օպտիմալ եղանակը, նշանակում է ելնել հասարակականորեն ընդունելի այն շափանիշներից, որոնք բխում են տվյալ սոցիալական համակարգի ապրելակերպի ու հասարակական հարաբերությունների բընույթից: Օպտիմալ լուծումը համակարգի այնպիսի գործունեություն է, որի ընթացքում սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերակառուցման շընորհիվ վերարտադրության ողջ շրջափուլին ուղեկցում է համակարգի համամասնական զարգացման անընդհատ աճող արդյունքը: Այդ՝ այսպես կոչված հասարակականորեն ընդունելի շափանիշներն էլ հենց դառնում են ամեն մի կոնկրետ սոցիալ-տնտեսական խնդրի լուծման օպտիմալության որոշման եղանակ: Կարելի է ասել, որ լուծման այս կամ այն եղանակի փաստարկումը հասարակական հարաբերությունների օպտիմալ զարգացման ու գործառնության, հասարակական կյանքի համակարգային վերլուծության տակտիկան ու ստրատեգիան մշակելու սոցիալ-փիլիսոփայական վերլուծության ելակետն է:

Խնդրի լուծման օպտիմալ եղանակի փաստարկումը ելնում է երկու հիմնական շափանիշներից: Մի դեպքում փաստարկվում են խնդրի լուծման փու-

<sup>8</sup> Տե՛ս П. Я. Октябрьский. Сущность и критерий экономической эффективности общественного производства. Л., ЛГУ, 1973, էջ 21:

<sup>9</sup> Տե՛ս В. Н. Левшиц. Оптимализация при перспективном планировании и проектировании. М., 1984, էջ 146:

<sup>10</sup> Տե՛ս О. И. Ларичев. Наука и искусство принятия решений, М., 1979, էջ 7.

լերի շարժողականությունն ու այն միջոցները, որոնք կարող են լուծումը արձնել արդյունավետ: Այս դեպքում մենք գործ ունենք լուծման օպտիմալության տնտեսագիտական շափանիշների հետ: Այդ շափանիշները կարելի է անվանել խնդրի օպտիմալ լուծման տեխնիկական-տեխնոլոգիական շափանիշներ: Տեխնիկական օպտիմալությունը ելնում է աշխատանքի հասարակական կազմակերպման, արտադրողական ուժերի արդյունավետ օգտագործման, ժամանակատարածական գործունեների ճշգրիտ իմացություն շափանիշներից: Տեխնիկական ու տեխնոլոգիական ճկունությունը բնութագրում է համակարգի վերակառուցման բնդունակությունները<sup>11</sup>: Ասածից հետևում է, որ սոցիալ-տնտեսական խնդիրների օպտիմալ լուծման համար անհրաժեշտ է բացահայտել գործունեության կազմակերպչական-տեխնիկական ու գործիքային-ֆունկցիոնալ կապերն ու հարաբերությունները: Չպետք է մոռանալ, որ ոչ մի լուծում չի կարող տալ ցանկալի արդյունք, եթե գործունեության պրոցեսը էնթալպա չէ տեխնիկական վերահսկման<sup>12</sup>: Բանն այն է, որ ֆունկցիոնալ համակարգի գործառնությունը, զարգացումն ու վերարտադրությունը օպտիմալ դարձնելու համար անհրաժեշտ է ապահովել համակարգի տարրերի ու մեխանիզմների հուսալիությունը, կազմակերպչական-տեխնիկական ապահովվածությունը, ունենալ հուսալի նյութատեխնիկական բազա և այլն: Լուծման օպտիմալության տեխնիկական-տեխնոլոգիական տեսանկյունը ենթադրում է բացահայտել ու օգտագործել համակարգի զարգացման սովյալ փուլին բնորոշ բոլոր այն միջոց-ոնեսուրսները, որոնք բխում են խնդրի լուծման սովյալ եղանակի շահերից: Խնդրի լուծումը չի կարելի համարել օպտիմալ, եթե հասարակության զարգացման սովյալ փուլում այն կարելի էր լուծել ավելի քիչ նյութական ու դրամական ծախսերով: Ընդ որում, հարցը շունի միայն տրնտեսական նշանակություն: Տնտեսականն ու սոցիալականը միևնույն երևույթի երկու փոխընդդրացնող կողմերն են: Ամեն մի խնդիր, ի վերջո, սոցիալ-տնտեսական երկմիասնություն է: Չկատարելագործելով իր առջև դրված խնդիրների լուծման տնտեսական մեխանիզմները, սոցիալական համակարգն աննպաստ պայմաններ է ստեղծում նաև հասարակական հարաբերությունների ծավալման համար: Սոցիալական կոռուպիան տնտեսական կոռուպիայի անմիջական հետևանքն է: Եվ հակառակը: Բանն այն է, որ ամեն մի խնդիր սոցիալական համակարգի ամբողջական շղթայի մի օղակն է, որը բազմաթիվ թելերով կապված է շղթայի մյուս օղակներից: Այդ պատճառով էլ խնդրի օպտիմալ լուծումը պետք է բավարարի ոչ միայն տեխնիկական-տեխնոլոգիական պահանջներին, այլև ելնի որոշակի սոցիալ-քաղաքական ու գաղափարական նկատառումներից:

Սոցիալիզմի պայմաններում տեխնիկական-տեխնոլոգիական օպտիմալության պահանջը ինքնանպատակ չէ: Այն ամբողջապես ծառայում է սովետական հասարակության սոցիալ-քաղաքական նպատակներին՝ սովետական մարդկանց նյութական ու հոգևոր կյանքի կատարելագործմանը: Տեսադաշտում շունենալ այս ելակետը, նշանակում է կամայականորեն ստեղծել պարագործալ իրագրություն: Բանն այն է, որ սոցիալիստական արտադրության նպատակը մարդկանց հարաճուն պահանջմունքների բավարարումն է: Սոցիալիզմի մեծագույն արժեքը մարդն է. ամեն ինչ մարդու համար և հանուն մարդու: Այդ խնդիրն իրագործելու համար անհրաժեշտ է արմատապես փո-

<sup>11</sup> См. П. Е. Беленский, Ю. Л. Гиттик, Методологические аспекты организационной деятельности в новых производственных системах. В кн.: Системные исследования: Мет. и логические проблемы. Ежегодник, 1985, М., 1986, № 282:

<sup>12</sup> См. А. В. Лебедев, в. 37, № 420:



խել աշխատանքի պայմաններն ու ընույթը: Մարդկանց պահանջմունքների բավարարումը ինքնին չի իրականանում: Դրա համար անհրաժեշտ է մարդկանց ամենօրյա մասնակցությունը նյութական ու հոգևոր արժեքների արտադրությանն ու վերարտադրությանը: Այդ պրոցեսում տեղի է ունենում մարդու անխուսափելի երկատում: Մարդը միաժամանակ հանդես է գալիս որպես մեծագույն արժեք և այդ արժեքին «ծառայող» աշխատուժե: Ամեն ինչ հանուն մարդու սկզբունքը կարելի է իրագործել միայն մարդու միջոցով: Հետևաբար մենք գործ ունենք երկու փոխապայմանավորված՝ «մարդ-արժեք» և «մարդ-աշխատուժե» հասկացությունների հետ: Մարդ-աշխատուժը իր իսկ մարդ-արժեքի ինքնահաստատման միջոցն է: Եվ ահա, երբ անտեսվում են մարդ-աշխատուժի տնտեսական ու սոցիալական շահերը, երբ անտեսվում է խնդիրներ լուծող մարդկային գործոնի դերը, դրանով իսկ «ամեն ինչ մարդու համար և հանուն մարդու» սկզբունքն առարկայազրկվում է: Դրա հետևանքով մեր երկրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման որոշակի փուլում մարդ-աշխատուժի և մարդ-արժեքի միջև խզում առաջացավ: Առաջ եկավ որոշակի պարադոքսալ իրադրություն: Սոցիալիստական արտադրության նրպատակի և մարդկանց նյութական շահագրգռվածության տնտեսական մեխանիզմների միջև հակասության հետևանքով մարդ-աշխատուժը օտարվեց մարդ-արժեքից: Երևույթը պարադոքսալ է, քանի որ մարդ-աշխատուժը կարծես թե «կորցրեց» հետաքրքրությունը իր իսկ մարդ-արժեքի նկատմամբ: Մինչդեռ՝ մարդ-աշխատուժն այն հիմնական միջոցն է, որի օգնությամբ հնարավոր է ստեղծել անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմաններ մարդու՝ որպես մեծագույն արժեքի, ծավալման ու զարգացման համար: Ավելին, մարդ-աշխատուժը միջոց է միայն արտաքինապես: Իրականում նա նպատակ-միջոց է: Նա իր նպատակի միջոցն է: Հետևաբար, չբավարարելով մարդ-աշխատուժի աճող պահանջմունքները, չի կարելի նրան ներառնել մի այնպիսի արդյունավետ գործունեության մեջ, որի շնորհիվ հնարավոր լինի իրականացնել ամեն ինչ մարդու համար և հանուն մարդու» հումանիստական սկզբունքը: Նշված հակասության հաղթահարումը խիստ կարևոր է, քանի որ տնտեսական անբավարարվածությունը ծնում է սոցիալական անտարբերություն: Նկատի ունենալով այս հանգամանքը, անհրաժեշտ է խնդրի լուծման օպտիմալությունը որոշելիս տեխնիկական-տեխնոլոգիական շափանիշները լրացնել արտոլոգիական-մեթոդոլոգիական շափանիշներով<sup>13</sup>:

Այսպիսով, լուծման այս կամ այն եղանակի օպտիմալությունը փաստարկելիս անհրաժեշտ է նկատի ունենալ երկու հիմնական պահանջներ: Մի կողմից լուծումը օպտիմալ է, եթե տեխնիկական-տեխնոլոգիական միջոցների օգտագործումն ապահովում է գործունեության տնտեսական մեխանիզմների ռացիոնալ վարքը, մյուս կողմից էլ այն պետք է համապատասխանի համակարգի աշխարհայացքային-մեթոդոլոգիական սկզբունքներին: Ավելին, ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը չի կարող համարվել օպտիմալ և տալ ցանկալի արդյունք, եթե հաշվարկից դուրս են մնացել սոցիալական հետևանքները: Իսկ դա նշանակում է, որ խնդրի լուծման օպտիմալության շափանիշը ի վերջո պետք է որոշել հասարակական հարաբերությունների բովանդակության մեջ տեղի ունեցող փոփոխություններով: Լուծումը օպտիմալ է, եթե այն նպաստում է համակարգի սոցիալականացման: աճին, հասարա-

<sup>13</sup> С. В. Ю. Козелецкий. Психологическая теория решений. Под ред. Б. В. Бирюкова. М., 1979, էջ 12—13:

կական հարաբերությունների օպտիմալ զարգացմանն ու գործառնությունը, սոցիալական պոտենցիալի արդյունավետ օգտագործմանը:

Խնդրի օպտիմալ լուծման տեխնիկական-տեխնոլոգիական և արժեքային-մեթոդոլոգիական շափանիշները գտնվում են դիալեկտիկական միասնության մեջ: Տեխնիկական-տեխնոլոգիական միջոցների օգտագործումն ունի վառ արտահայտված սոցիալական երանգավորում: Հայտնի է, օրինակ, որ ժամանակակից կապիտալիզմի տրամադրություն տակ կան անսահման միջոցներ սոցիալ-տնտեսական խնդիրները ժամանակին լուծելու համար: Սակայն, ինչպես նշում էր Կ. Մարքսը, կապիտալիզմի ժամանակ հասարակական արտադրողական ուժերի զարգացման միջոցները հակադրության մեջ են գտնվում կապիտալիստական արտադրության նպատակի հետ<sup>14</sup>: Սոցիալիզմի պայմաններում սոցիալ-տնտեսական խնդիրների օպտիմալ լուծման ավելի լայն հնարավորություններ կան, քանի որ համակարգի զարգացումը պլանաշափ է: Պլանաշափությունը սոցիալիստական հասարակարգի զարգացման ու գործառնության բարձրագույն եղանակն է: Այն սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման այնպիսի եղանակ է, երբ նախապես հաշվարկված են լուծման տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ հնարավոր եղանակները: «Մեզ համար ամենևին էլ միևնույն չէ, թե ինչ ուղիներով ու միջոցներով է ձեռք բերվում նյութական ու հոգևոր կյանքի բարելավումը, ինչ սոցիալական հետևանքների է այն հանգեցնում»<sup>15</sup>: Այսպիսով, սոցիալ-տնտեսական խնդրի օպտիմալ լուծումը ենթադրում է համակարգի սոցիալական ու տնտեսական ոլորտների համարժեք վերարտադրություն: Կողմերից մեկի թեթևաճատման դեպքում խնդրի լուծումը չի կարող համարվել օպտիմալ:

Սոցիալ-տնտեսական խնդիրների օպտիմալ լուծումը ինքնանպատակ չէ: Խնդիրը հասարակական մասշտաբով շքավարարված պահանջմունք է: Այն իր էությունով օբյեկտիվ է, քանի որ բխում է համակարգի անբավարար զարգացման ու գործառնության վիճակից: Խնդիրը նաև որոշակի սխալների ու դժվարությունների բացահայտված վիճակ է: Հետևաբար, լուծել խնդիրը, նըշանակում է վերակառուցել համակարգը, փոխել այն մեխանիզմները, որոնք արգելակում են համակարգի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման արագացումը: Այլապես համակարգի վերարտադրությունը կդառնա սխալների ու դժվարությունների ընդլայնված վերարտադրության պրոցես: Ահա թե ինչու այսօր, երբ սովետական ժողովուրդը ձեռնամուխ է եղել մեր երկրի սոցիալ-տնտեսական կյանքի հեղափոխական նշանակություն ունեցող վերակառուցման խնդրին, անհրաժեշտ է վերակառուցումը շարունակել ինքնանպատակ: Վերակառուցումն ընդամենը առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման նախադրյալ է, թեև, ինչ խոսք, այն նաև որոշակի խնդիրների լուծման պրոցես է: Չպետք է մոռանալ, որ վերակառուցումը միջոց է, որի արդյունավետությունն ու պատմական նշանակությունը որոշվում են ոչ թե մարդկանց սրտերում թողած արձագանքով, այլ այն ունի հետևանքներով, որոնք արմատապես կփոխեն մեր կյանքն ու ապրելակերպը: Լճացման ու քարացվածության անդորրը, որը ոչ հեռու անցյալում ներկայացվում էր որպես սովետական հասարակության կայունության ցուցանիշ, ապահովեց ՍՄԿՎ վերակառուցման քաղաքականության նկատմամբ մասսաների խանդավառությունն ու համակրանքը: Բայց, ինչպես նշվեց ՍՄԿՎ ԿԿ 1987 թ. հունիսյան պլենումում, մենք չպետք է ցնծությամբ համակվենք վերակա-

<sup>14</sup> К. Маркс, Ф. Энгельс. Соч., т. 25, ч. 1, с. 274.

<sup>15</sup> «Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարի նյութերը», էջ 62:

ուցման հաջողություններով<sup>16</sup>: Մարդկանց խանդավառության, ստեղծագործական պոռթկման տեականությունն ու խորությունը կախված է վերակառուցման արդյունքներից, այն բանից, թե վերակառուցումը որքանով կնրպաստի մեր երկրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման արագացմանը: Զարգացման արագացումը վերակառուցման նպատակն է և սովետական հասարակության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման օպտիմալության ցուցանիշը:

**Э. А. АРУТЮНЯН—Перестройка как способ оптимального решения социально-экономических задач.—**При развитии и усложнении общественных отношений более сложными становятся и решения социально-экономических задач. Эта сложность определяет теоретическую и практическую важность проблемы, рассматриваемой на основе социально-философского анализа в плане радикальной перестройки общественной жизни.

<sup>16</sup> Տե՛ս «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը (25—26 հունիսի, 1987 թ.)», էջ 17: